

# Բնակիչների իրավունքները

Որպես հաշմանդամների տան կամ ծերանոցի բնակիչ՝ Դուք իրավունք ունեք՝

- ստանալու հարգալից և արժանապատիվ վերաբերմունք, որը զերծ է բռնությունից և արհամարհանքից.
- ստանալու Ձեր անձնական նախապատվությունների ընդունելի բավարարում.
- տեղեկանալու Ձեր՝ որպես սպառողի, իրավունքների և պարտավորությունների մասին.
- լինելու ֆիզիկական կամ քիմիական բնույթի սահմանափակումներից ազատ.
- ուսումնասիրելու Ձեր բժշկական կամ անձնական գործերը.
- կառավարելու Ձեր անձնական կամ ֆինանսական գործերը.
- իմանալու Ձեր բժշկական պայմանները և մասնակցելու խնամքի պլանավորմանը կամ մերժմանը.
- անձնական հարցերի, բուժսպասարկման, այցելությունների գաղտնիության և նամակների ուղարկման կամ ստացման՝ առանց դրանք բացելու.
- մասնակցելու Ձեր ընտրած սոցիալական և կրոնական միջոցառումներին.
- լիովին տեղեկացված լինելու ցանկացած հարցի մասին, որը վերաբերում է Ձեր կյանքին այս տանը, ներառյալ ծառայությունները և օրական դրույքով գանձվող վճարները.
- հիմնարկության անձնակազմին կամ այլ անձանց հայտնելու Ձեր մտահոգություններն ու խնդիրները, ինչպես նաև առաջարկվող փոփոխությունները.
- 30 օր առաջ ծանուցում ստանալու Ձեր տեղափոխման կամ դուրսգրման մասին և ունենալու այդ ծանուցումը բողոքարկելու հնարավորություն.
- արագորեն պատասխան ստանալու Ձեր բոլոր հիմնավոր հարցումներին և խնդրանքներին.

Մրանք Ձեր իրավունքների ընդամենը մի մասն են. Բնակիչների իրավունքների մասին լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար կարող եք դիմել՝

**Executive Office of Elder Affairs  
State Long Term Care  
Ombudsman  
One Ashburton Place Room 517  
Boston, MA 02108**

**1-800-AGE-INFO  
(1-800-243-4636)  
կամ 617-727-7750**

